



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2015 թվականի հունվարի 26-ից

ԳՅՈՒՏԵՐ	4, 82
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 84</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	11, 89
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>13, 91</i>
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	16, 94
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	<i>18, 96</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	21
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկմա ն նշանների մասին</i>	<i>23</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>74</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ	76
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	78
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	97

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

0010, Երևան, Главный проспект, Дом Правительства 3
 Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
 Тел. (374 11) 597-535 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 82
Сведения о выданных патентах.....	6, 84
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	11, 89
Сведения о выданных патентах.....	13, 91
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	16, 94
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	18, 96
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	21
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	23
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	74
УКАЗАТЕЛИ.....	76
СООБЩЕНИЯ.....	78
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	97

CONTENTS

INVENTIONS.....	4, 82
Information on granted patents.....	6, 84
UTILITY MODELS.....	11, 89
Information on granted patents.....	13, 91
INDUSTRIAL DESIGNS.....	16, 94
Information on registered industrial designs.....	18, 96
TRADE MARKS.....	21
Information on registered trade marks and service marks	23
Information on renewal of effect of trademark registration	74
INDEXES.....	76
REPORTS.....	78
TWO-LETTER CODES.....	97

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2015.01** (11) **2905** (13) **A**
A23C 19/00

(21) **AM20130094** (22) **01.07.2013**

(72) Ռազմիկ Բեգլարյան (AM), Լաուրա Գրիգորյան (AM), Ֆելիքս Ասատրյան (AM), Լյուդմիլա Բալայան (AM), Անահիտ Սուլթանյան (AM)

(73) Ռազմիկ Բեգլարյան, 0051, Երևան, Արաբկիրի 21-րդ փող. 1, բն. 56 (AM)

(54) **Կաթնաշոռի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կաթնարդյունաբերությանը, մասնավորապես՝ կաթնաշոռի ստացման եղանակին:

Կովի կաթը պաստերիզացնում են 74-78°C ջերմաստիճանում՝ 20-25 վրկ տևողությամբ, սառեցնում են մինչև մակարդման ջերմաստիճան՝ 28-32°C, ավելացնում են կալցիումի քլորիդի 40%-ոց ջրային լուծույթ 20-40գ՝ 100լ կաթի հաշվով, պեպսին, մակարդ, այնուհետև պատրաստի մակարդվածքը մշակում են, տաքացնում մինչև 45-47°C, ապա սառեցնում: Որպես մակարդ վերցնում են 1 տ կաթի հաշվով 5-10% պանրի, կաթնաշոռի և կազեինի 5:4:3 հարաբերակցությամբ շիճուկ, իսկ պատրաստի մակարդվածքին սառեցնելուց հետո ավելացնում են գետնախնձորի խտանյութ 3-5 %-ի չափով:

Ընդլայնվում է դիետիկ կաթնաշոռի տեսականին:

Կոնֆետը պարունակում է շաքարային բաղադրիչ, կաթնային բաղադրիչ, կակաոյի փոշի, սապերավի տեսակի խաղողի քաղցու, կիտրոնաթթու, ընդ որում որպես կաթնային բաղադրիչ վերցված է 8%-անոց յուղայնությամբ խտացրած կաթ, իսկ որպես շաքարային բաղադրիչ՝ շաքարամթաթային օշարակ, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). շաքարամթաթային օշարակ՝ 60,28-65,32, 8%-անոց յուղայնությամբ խտացրած կաթ՝ 25,0-27,0, կակաոյի փոշի՝ 4,5-5,5, կիտրոնաթթու՝ 0,18-0,22, սապերավի տեսակի խաղողի քաղցու՝ 5,0-7,0:

Ընդլայնվում է կոնֆետների տեսականին:

(51) **2015.01** (11) **2907** (13) **A**
B60R21/00

(21) **AM20140116** (22) **29.08.2014**

(72) Գևորգ Սարգսյան (AM)

(73) Գևորգ Սարգսյան, 0070, Երևան, Ռոստոմի 29, բն. 79 (AM)

(54) **Անվտանգության բարձիկ**

(57) Գյուտը վերաբերում է ավտոմեքենա-շինությանը, մասնավորապես՝ մեքենաների պասսիվ անվտանգությանը և կարող է կիրառվել տանիք ունեցող բոլոր տեսակի մեքենաներում:

Անվտանգության բարձիկն ունի դիմային և կողային հատվածամասեր: Լրացուցիչ ունի նաև առաստաղային և երկրորդ կողային հատվածամասեր, ընդ որում դիմային, կողային և առաստաղային հատվածամասերը կատարված են որպես մեկ ամբողջություն, որը տեղակայված է մեքենայի առաստաղում:

Բարձրացվում է ուղևորների պաշտպանվածության մակարդակը, նվազեցվում են անտանգության բարձիկի փոխարինման ծախսերը, փոքրանում է անտանգության բարձիկից ստացված վնասվածքի հավանականությունը, 2 նկ.:

(51) **2015.01** (11) **2906** (13) **A**
A23G 3/00

(21) **AM20130105** (22) **11.07.2013**

(72) Վահրամ Գաբզիմալյան (AM), Վարսենիկ Ավետիսյան (AM)

(73) Վահրամ Գաբզիմալյան, 0005, Երևան, Արցախի 1, բն.32 (AM), Վարսենիկ Ավետիսյան, 0025, Երևան, Հերացու 14/4 (AM)

(54) **Կոնֆետ**

(57) Գյուտը վերաբերում է սննդարդյունաբերությանը, մասնավորապես՝ կոնֆետներին, որոնք ունեն ֆունկցիոնալ նշանակություն:

(51) **2015.01** (11) **2908** (13) **A**
C01F 7/00

- (21) **AM20140124** (22) **05.09.2014**
- (72) Ազնիվ Մխիթարյան (AM), Գևորգ Թոռչյան (AM), Արման Թոռչյան (AM), Միեր Թոռչյան (AM), Ժուժաննա Աբրահամյան (AM)
- (73) Գևորգ Թոռչյան, 0095, Երևան, Մոլդովական 14, բն. 29 (AM), Արման Թոռչյան, 0095, Երևան, Մոլդովական 14, բն.29 (AM)
- (54) **Նատրիումի ալյումինատի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիային, մասնավորապես՝ նատրիումի ալյումինատի ստացման եղանակին, որը կիրառվում է որպես կոագուլյանտ, ինչպես նաև հանդիսանում է միջանկյալ նյութ արզնահողի և բյուրեղային ալյումինի հիդրօքսիդի ստացման համար:

500-550 գ/լ կոնցենտրացիայով նատրիումի հիդրօքսիդի լուծույթը փոխազդում են ալյումինե նրբաթիթեղի արտադրության թափոնի հետ մինչև կաուստիկ հարաբերությունը՝ Na_2O/Al_2O_3 հավասարվի մեկի: Փոխազդումն իրականացնում են 90 °C ջերմաստիճանում, ելանյութերը 20-25 րոպե անընդհատ խառնելով, առաջացած լուծույթը սառեցնում են մինչև սենյակային ջերմաստիճան, ապա քամում:

Պարզեցվում է եղանակը, նվազում է արգասիքի ինքնարժեքը:

(51) **2015.01** (11) **2909** (13) **A**
C08L 61/00

- (21) **AM20140123** (22) **04.09.2014**
- (72) Ալբերտ Պողոսյան (AM), Նորիկ Մելիքսեթյան (AM), Գալուստ Մելիքսեթյան (AM)
- (73) «Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)
- (54) **Շփական բաղադրանյութ**
- (57) Գյուտը վերաբերում է շփական նշանակության պոլիմերային բաղադրանյութերին և կարող է օգտագործվել տրանսպորտային միջոցների արգելակային կոճղակների պատրաստման համար:

Շփական բաղադրանյութը ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգվ. %.
Ֆենոլֆորմալդեհիդային խեժ՝ 11,0 - 16,0, բուտադիեն-նիտրիլային կաուչուկ՝ 1,0 - 7,0, ապակեթեթք՝ 11,0 - 13,0, բազալտաթեթք՝ 20 - 24, բարիտային խտանյութ՝ 22,0 - 30,0, տիտանի երկօքսիդ՝ 2,0 - 5,0, հեղուկ ապակի՝ 2,0 - 4,0, մարմարի փոշի՝ 2,0-5,0, գրաֆիտ՝ 6,0 - 8,0, նատրիումի տետրաբորատ՝ 4,0 - 7,0:

Գյուտը ապահովում է տրանսպորտային միջոցների արգելակային կոճղակների բարձր մաշակայունությունը և շփման գործակցի կայունությունը:

(51) **2015.01** (11) **2910** (13) **A**
E01F7/00

- (21) **AM20140152** (22) **04.11.2014**
- (72) Հենրիկ Բաբայան (AM), Վահե Բաբայան (AM)
- (73) Հենրիկ Բաբայան, 0012, Երևան, Սունդուկյան 1, բն. 55 (AM), Վահե Բաբայան, 0052, Երևան, Ծարավ աղբյուր 55, բն. 5 (AM)
- (54) **Երկրացանցի բաղադրանյութ**
- (57) Գյուտը վերաբերում է ճանապարհների շինարարության և շահագործման բնագավառին, մասնավորապես՝ երկրացանցի բաղադրանյութին:

Երկրացանցի բաղադրանյութը ներառում է հետևյալ բաղադրակազմը. պոլիէթիլեն, բազալտի փոշի և ապակեթեթք, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). պոլիէթիլեն՝ 80-90, բազալտի փոշի՝ 5-11, ապակեթեթք՝ 5-9:

Բարձրացվում է պոլիէթիլենային երկրացանցի ամրությունը:

(51) **2015.01** (11) **2911** (13) **A**
F01C 1/00

- (21) **AM20140131** (22) **22.09.2014**
- (72) Նորայր Բագրատի Ենգիբարյան (AM), Բագրատ Նորայրի Ենգիբարյան (AM)
- (73) Նորայր Բագրատի Ենգիբարյան, 0005, Երևան, Տիգրան Մեծ պող. 61, բն. 20 (AM), Բագրատ Նորայրի Ենգիբարյան, 0005, Երևան, Տիգրան Մեծ պող. 61, բն. 20 (AM)

(54) Ուղեծրային մեքենա և այդ մեքենայի հիմքով համակցություններ

(57) Գյուտը վերաբերում է ռոտորային մեքենաներին, որոնցում մխոցը կատարում է անընդհատ ուղեծրային պտույտ տորաձև խցի մեջ: Այն կարող է օգտագործվել որպես պոմպ, հիդրոշարժիչ կամ կոմպրեսոր:

Ուղեծրային մեքենան ունի սնամեջ իրան, տանող լիսեռ և լիսեռի հետ կոշտ կապված ռոտոր, տորաձև մխոցախուց, մխոցներ, տափակ թիթեղների տեսքով սահափականներ, որոնք ունեն իրանի շառավղային ճեղքերով տեղաշարժվելու հնարավորություն, ինչպես նաև սահափականների դիրքավորումը կառավարող միասնական մեխանիզմ: Գյուտի համաձայն, ռոտորն իրականացված է թմբուկի տեսքով, մխոցներից յուրաքանչյուրն իրականացված է թմբուկի կողմնային մակերևույթի վրա ելուստի տեսքով, յուրաքանչյուր մխոցին համապատասխանում է ներթողման և արտաթողման պատուհաններ, որոնք կատարված են մխոցի տարբեր կողմերում: Սահափականներն իրականացված են մխոցախցի առանցքին զուգահեռ ուղղություններով համընթաց-հետադարձ շարժման հնարավորությամբ և դրանց թիվը հավասար է մխոցների կրկնակի թվին: Սահափականների դիրքավորումը կառավարող մեխանիզմի կառավարիչ թմբուկն ունի գլանի ձև, բռունցքն իրականացված է կառավարիչ թմբուկի գլանային մակերևույթի վրա փակ ակոսի տեսքով, իսկ հրիչները կապված են սահափականների հետ ձողերի միջոցով, որոնք զուգահեռ են իրանի առանցքին: Մեքենայի հիմքով հնարավոր են համակցություններ:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում է օ.գ.գ.-ն, 19 նկ.:

(51) **2015.01** (11) **2912** (13) **A**
F02B 75/00

- (21) **AM20130108** (22) **12.07.2013**
- (72) Արմեն Հովհաննեսի Տեր-Իսահակյան (AM), Յուրի Սարգսի Բուռնազյան (AM)
- (73) Արմեն Հովհաննեսի Տեր-Իսահակյան, 0037, Երևան, Ազատության պող. 10, բն. 43 (AM), Յուրի Սարգսի Բուռնազյան, 0054, Երևան, Դավթաշենի 1-ին թաղ. 37, բն. 12 (AM)

(54) Օպոզիտային ներքին այրման շարժիչ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ շարժիչաշինությանը, հատկապես՝ օպոզիտային ներքին այրման շարժիչներին:

Օպոզիտային ներքին այրման շարժիչը բաղկացած է իրանից, որտեղ դեմ առ դեմ դասավորված են երկու զույգ գլաններ իրենց մխոցներով, մխոցակոթերից, ելքի լիսեռից, դեպի ելքի լիսեռ շարժումը փոխանցող հանգույցից:

Երկու զույգ գլանները տեղադրված են միևնույն հարթության մեջ, զույգ-զույգ նույն առանցքի վրա, իսկ տեղակայման առանցքները՝ միմյանց զուգահեռ: Յուրաքանչյուր զույգ մխոցները տեղակայված են մեկ մխոցակոթի ծայրերին: Մխոցակոթերի միջնամասում ամրացված են ուղղորդիչներ ունեցող մաշիկներ: Յուրաքանչյուր զույգ հակադիր տեղակայված ուղղորդիչների վրա սահելու հնարավորությամբ տեղակայված է երկու հատվածից կազմված չորուկ: Գլանների երկայնական առանցքների միջև և իրենց զուգահեռ լիսեռի վրա տեղադրված են երկու կցաշուրթ, որոնց վրա ապակենտրոն տեղակայված են ելուստներ՝ իրենց վրա տեղադրված չորուկներով: Կցաշուրթերի միջև տեղավորված է տանող ատամնանիվը, որը կցման հնարավորությամբ կապված է ելքի լիսեռի վրա տեղադրված տարվող ատամնանիվի հետ:

Պարզեցվում է շարժիչի կառուցվածքը, 9 նկ.:

(51) **2015.01** (11) **2913** (13) **A**
F24H 1/00
F24B 1/00

- (21) **AM20130093** (22) **01.07.2013**
- (72) Պարգև Վանիկի Հովհաննիսյան (AM)
- (73) Պարգև Վանիկի Հովհաննիսյան, 0617, Արարատի մարզ, գյուղ Ոսկետափ, Խ. Դաշտենցի 11 (AM)
- (54) **Երկարատև այրման պինդ վառելիքային կաթսա**
- (57) Գյուտը վերաբերում է էներգետիկայի բնագավառին, մասնավորապես՝ երկարատև այրման պինդ վառելիքային կաթսաներին և կարող է կիրառվել ջեռուցման և տնտեսական պահանջների համար տաք ջրով ապահովելու համար:

Երկարատև այրման պինդ վառելիքային կաթսան ունի մետաղյա իրանի մեջ տեղակայված վառելանյութի բեռնման բունկեր, օդի մղման ճեղք, վառելանյութի մնացորդների հեռացման բունկեր, ջերմափոխանակիչ սարք, ջրի ներթողման և տաք ջրի արտաթողման ջերմափոխանակիչ խողովակաոստեր: Ջերմափոխանակիչ սարքը տեղակայված է վառելանյութի բեռնման բունկերին զուգահեռ և իր ստորին մասում տեղակայված ճեղքի միջոցով միացված է վառելանյութի բեռնման բունկերին: Վառելանյութի մնացորդների հեռացման բունկերը և օդի մղման ճեղքը տեղակայված են վառելանյութի բեռնման բունկերի ստորին մասում, ընդ որում վառելանյութի մնացորդների հեռացման բունկերի ստորին մասում տեղակայված է վառելանյութի մնացորդների հեռացման պտուտակիչ, իսկ վերին մասում՝ վառելանյութի բեռնման բունկերից այն բաժանող ցանց: Վառելանյութի բեռնման բունկերի վրա տեղակայված է վառելանյութից անջատվող գոլորշիների կոնդենսացման սարք, որի կենտրոնական մասով անցնում է խողովակ կոնդենսացված ջրի հեռացման խողովակաոստով: Կոնդենսացման և ջերմափոխանակիչ սարքերը հաղորդակցվում են միմյանց հետ ջրի ներթողման խողովակաոստի միջոցով, որի ելքը միակցված է ջերմափոխանակիչ սարքում տեղակայված պարուրածև ջերմափոխանակիչ խողովակի մուտքին, որի ելքը իր հերթին միակցված է տաք ջրի արտաթողման խողովակաոստին:

Բարձրացվում են կաթսայի օ.գ.գ. և խնայողականությունը, 1 նկ.:

(51) **2015.01** (11) **2914** (13) **A**
G01R 27/00

- (21) **AM20140100** (22) **04.08.2014**
- (72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)
- (73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն.Շնորհալու 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM)

(54) **Ունակային տվիչի պարամետրերի չափիչ**

(57) Ունակային տվիչի պարամետրերի չափիչն ունի չափողական երկբևեռանի, բարձրհաճախային փոփոխական հոսանքի գեներատոր, հոսանասահմանափակող տարր, էլեկտրական ազդանշանների կերպափոխման երկմուտք էլեկտրոնային մոդուլ և ծրագրավորվող միկրոկոնտրոլեր: Չափողական երկբևեռանին ունի ունակային տվիչ, որի սեղմակներից մեկը միացված է ընդհանուր հաղորդալարին: Չափողական երկբևեռանին հոսանասահմանափակող տարրի միջոցով միացված է բարձրհաճախային փոփոխական հոսանքի գեներատորին: Էլեկտրոնային մոդուլի մուտքերը միացված են համապատասխանաբար չափողական երկբևեռանի և ունակային տվիչի սեղմակներին, իսկ ելքը միացված է միկրոկոնտրոլերի ազդանշանային մուտքին: Չափողական երկբևեռանին լրացուցիչ ունի ունակային տվիչին հաջորդաբար միացված առաջին կոնդենսատոր, կառավարվող բանալու միջոցով առաջին կոնդենսատորին զուգահեռ միացված երկրորդ կոնդենսատոր: Բանալու կառավարման մուտքը միացված է միկրոկոնտրոլերի կառավարման ելքին:

Պարզեցվում է ունակային տվիչի պարամետրերի չափիչի կառուցվածքը, բարձրացվում է չափման ճշգրտությունը, 3 նկ.:

(51) **2015.01** (11) **2915** (13) **A**
G01R 27/00

- (21) **AM20140101** (22) **04.08.2014**
- (72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)
- (73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն.Շնորհալու 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM)
- (54) **Ունակային տվիչի պարամետրերի չափման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային, մասնավորապես՝ ունակային տվիչների օգտագործումով նյութերի դիէլեկտրիկ հատկությունների որոշմանը, և կարող է օգտագործվել բարձրհաճախային փոփոխական հոսանքով նյութերի էլեկտրաֆիզիկական հատկությունները որոշելու համար:

Ըստ ունակային տվիչի պարամետրերի չափման եղանակի, ունակային տվիչին հաջորդաբար միացնում են կոնդենսատոր, բանալու միջոցով կոնդենսատորին զուգահեռ միացնում են լրացուցիչ կոնդենսատոր: Այդ միացումով ստացված չափողական երկբևեռանին միացնում են բարձրհաճախային փոփոխական հոսանքի աղբյուրին: Բանալու միջոցով կոնդենսատորին զուգահեռ միացնում են լրացուցիչ կոնդենսատոր: Բանալու բաց և փակ վիճակներում չափում են երկբևեռանի և ունակային տվիչի սեղմակների լարումների միջև փուլային շեղման անկյունը: Համապատասխան բանաձևերով հաշվում են ունակային տվիչի ունակությունը և դիմադրությունը:

Պարզեցվում է ունակային տվիչի պարամետրերի չափման գործընթացը, բարձրացվում է այդ պարամետրերի չափման ճշգրտությունը, 2 նկ.:

-
- (51) 2015.01 (11) 2916 (13) A
H01L31/00
 - (21) AM20140129 (22) 19.09.2014

- (72) Կարեն Գագիկի Այվազյան (AM)
- (73) Կարեն Գագիկի Այվազյան, 0101, Երևան, Ավան, Սայաթ-Նովա 8/27 (AM)

(54) Սև սիլիցիումից հակաանդրադարձնող մակերևույթով կիսահաղորդչային արևային էլեմենտի պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային արևային էլեմենտների պատրաստմանը և կարող է կիրառվել արևային էներգիան անմիջականորեն էլեկտրականի փոխակերպելու համար:

Առաջարկվում է կիսահաղորդչային արևային էլեմենտների ռեակտիվ իոնային խաճատման մեթոդով սև սիլիցիումից հակաանդրադարձնող մակերևույթային շերտի ձևավորումն իրականացնել դիֆուզիոն P-N անցման ստացումից հետո, ընդ որում այդ շերտի հաստությունը չպետք է գերազանցի P-N անցման խորությունը, բայց լինի ոչ փոքր 0.3 մկմ-ից:

Գյուտը թույլ է տալիս լավացնել կիսահաղորդչային արևային էլեմենտների էլեկտրական և օպտիկական բնութագրերը, մեծացնել ՕԳԳ-ն, 1 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2015.01** (11) **385** (13) **Ս**
A24D 1/00

(21) **AM20140130U** (22) **19.09.2014**

(72) Սեմյոն Պողոսյան (AM)

(73) Սեմյոն Պողոսյան, 0012, Երևան, Թավրիզյան 46 (AM)

(54) **Ծխախոտի ֆիլտր**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է ծխախոտի արտադրությանը, մասնավորապես՝ ծխախոտների ֆիլտրների արտադրությանը:

Ծխախոտի ֆիլտրը ունի թելքավոր կամ միկրոծակուտկեն ֆիլտրող նյութ և պեռլիտի, գերադասելիորեն՝ փքված պեռլիտի մանրացված ավազահատիկների և միկրոգնդերի տեսքով սորբենտ: Ծխախոտի ֆիլտրը տեղադրված է առանձին ձգված պատիճի մեջ, որի լայնակի մակերևույթներին կատարված են մուտքային և ելքային անցքեր:

Պատիճը կարող է պատրաստվել ամենատարբեր նյութերից և լայնական կտրվածքում ունենալ երկրաչափական զանազան պատկերների տեսք:

Այսպիսի լուծումը հնարավորություն է տալիս ծխախոտի ֆիլտրը օգտագործել ոչ միայն սիգարետների, այլև ծխափողերի և ծխամորճերի մեջ՝ որպես մեկանգամյա օգտագործման ֆիլտրող տարր:

(51) **2015.01** (11) **386** (13) **Ս**
A47G 25/00

(21) **AM20130101U** (22) **12.01.2012**

(85) 10.07.2013

(86) PCT/CN 2012/070261, 12.01.2012

(87) WO 2012/095010, 19.07.2012

(31) 13/004,935, (32) 12.01.2011, (33) US

(72) Մինգ-Տե Չեն (CN)

(73) Մինգ-Տե Չեն (CN)

(54) **Կոշիկի շարժական շրջանակի կառուցվածք**

(57) Կոշիկի շարժական շրջանակի կառուցվածքը ներառում է վերին և ստորին հատվածամասեր, կարգաբերող միջոց: Հատվածամասերը դարձի հնարավորությամբ միակցված են մեկը

մյուսին, իսկ կարգաբերող միջոցը միակցված է հատվածամասերին՝ դրանց միջև ցանկալի անկյունային հեռավորություն սահմանելու հնարավորությամբ: Կոշիկի շրջանակի համար անհրաժեշտ տարածությունը կարող է ընտրվել ըստ կոշիկների ցուցադրման նպատակի:

(74) Հռիփսիմե Դավթյան

(51) **2015.01** (11) **387** (13) **Ս**
A61K 9/00

(21) **AM20140122U** (22) **03.09.2014**

(72) Վսեվոլոդ Իվանովիչ Կիսելև (RU), Վադիմ Միխայլովիչ Դրուխ (RU), Իգոր Նիկոլաևիչ Կուզնեցով (RU)

(73) ՋԱՕ «Իմիքս Գրուպ» (RU), «Ռոսսիյսկիյ ունիվերսիտետ դրուժբինարոդով» բարձրագույն պրոֆեսիոնալ կրթության դաշնային պետական բյուջետային կրթական հաստատություն (RU)

(54) **Իմունախթանող ակտիվություն ունեցող դեղամոմ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ իմունախթանող ակտիվություն ունեցող դեղամոմերին: Իմունախթանող ակտիվություն ունեցող դեղամոմը կատարված է ծավալային պտտման մարմնի ձևով՝ իմունախթանող դեղանյութով և ճարպասեռ հիմքով համասեռ զանգվածի տեսքով: Իմունախթանող դեղանյութը հավասարաչափ բաշխված է ճարպասեռ հիմքի մեջ: Դեղամոմի վերին մասը կատարված է կլորացված ծայրով կոնի տեսքով, կոնի վրա արված են քերթեր, իսկ դեղամոմի ստորին մասը կատարված է դեղամոմի երկարության 2/3 –ի չափով անցք ունեցող զլանի տեսքով: Որպես իմունախթանող դեղանյութ օգտագործված է երկինդոլիլմեթան, որպես ճարպասեռ հիմք՝ ճարպալուղ, բազմավիճիլպիրոլիդոն և որդան կարմիր:

Ընդլայնվում է դեղամոմերի տեսականին, բարձրացվում մոմիկի արդյունավետությունը, իմունախթանող ակտիվությունը և ապահովվում է նրա ձևի հարմարավետությունը:

(74) Արարատ Գալոյան

(51) **2015.01** (11) **388** (13) **U**
B03B 5/00
B07B 1/00

(21) **AM20140142U** (22) **15.10.2014**

(72) Փայլակ Հայրոյի Հայրապետյան (AM)

(73) Փայլակ Հայրոյի Հայրապետյան, 0008, Երևան, Օրբելի Եղբայրների 8, բն. 35 (AM)

(54) **Թմբկավոր քարմաղ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է օգտակար հանածոների հարստացման տեխնիկային և կարող է օգտագործվել ոսկու, թանկարժեք քարերի, այդ թվում՝ ադամանդ պարունակող ավազների հարստացման համար:

Թմբկավոր քարմաղն ունի գլանաձև բանոլ թմբուկ, որը շարժաբեր և հենարանային գլանվակների միջոցով տեղակայված է շրջանակի վրա, գլանվակների շարժաբեր, թմբկամաղ, որն ամրակցված է բանոլ թմբուկի ելքային ճակատին, ջրի մատուցման համակարգ, որը պարունակում է պոմպ, ընդ որում՝ բանոլ թմբուկի ներքին պատն ունի ներպատվածք: Առաջարկության համաձայն, բանոլ թմբուկի գլանվակների շարժաբերը լրացուցիչ ունի տարբերական ռեդուկտոր, որը տեղակայված է շրջանակի վրա շարժաբեր գլանվակների միջև, գլանվակներն իրականացված են բեռնատար մեքենայի հետևի անվազույզերի տեսքով, ռեդուկտորի ելքային կիսատնիները հողավորված են շարժաբեր անվազույզերի անվակնդերի հետ, իսկ ռեդուկտորի մուտքը խաչարդի և կարդանային լիսեռի միջոցով հողավորված է դիզելային շարժիչի հետ, որը տեղակայված է շրջանակի վրա:

Պարզեցվում է կառուցվածքը, ապահովվում է էլեկտրամատուցման աղբյուրներից հեռու գտնվող հանքավայրերում դրա շահագործման և տեղում վերանորոգման հնարավորությունը, 6 նկ.:

(51) **2015.01** (11) **389** (13) **U**
E01H 13/00

(21) **AM20140135U** (22) **27.09.2014**

(72) Արման Արամի Վարդանյան (AM)

(73) «Բարվա» ՍՊԸ, 0501, Արագածոտնի մարզ, ք. Թալին, Մյասնիկյան 20 (AM)

(54) **Կարկտի կանխման ակուստիկական գեներատոր**

(57) Կարկտի կանխման ակուստիկական գեներատորն ունի պայթյունի գլանաձև խցիկ և կոնաձև ուղղորդ փող: Պայթյունի խցիկն ունի գազի ներարկիչ, բռնկիչ և օդափոխության հանգույց: Գազի օդափոխության հանգույցն իրականացված է պայթյունի խցիկի պատին ամրակցված ծնկաձև ելքային խողովակ ունեցող շրջափչող օդափոխիչի տեսքով: Գազի ներարկիչի ելքը միակցված է շրջափչող օդափոխիչի ծնկաձև խողովակին:

Մեծացվում է կարկտի կանխման ակուստիկական գեներատորի աշխատանքի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) **2015.01** (11) **390** (13) **U**
E04G13/00
E04G15/00

(21) **AM20140140U** (22) **07.10.2014**

(72) Գագիկ Գալստյան (AM), Վալտեր Աթանեսյան (AM)

(73) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Բլոկային կաղապարամած պատերի կառուցման համար**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է միաձույլ կառույցների շինարարության բնագավառին և կարող է օգտագործվել բնակելի շենքերի փակ խորշերի, վերելակների հորանների, աստիճանավանդակների և նկուղների պատերի կառուցման համար:

Բլոկային կաղապարամածն ունի անկյունային և միջանկյալ վահաններ, ամբարձիկներ և բեռնամբարձ օղակներ: Օգտակար մոդելի համաձայն, անկյունային վահանների թևերը միմյանց միացված են ձգասարքերով, ստորին անկյունում միացված են հողակապերով, իսկ անկյունային և միջանկյալ վահանների միացման կողերի կողմնային մակերևույթները կատարված են թեք կտրվածքով:

Պարզեցվում է կաղապարամածի կոնստրուկցիան, կրճատվում են տրանսպորտային աշխատանքների աշխատատարությունը, 3 նկ.:

(51) 2015.01 (11) 391 (13) Ս
F24H 1/00

(21) AM20140117U (22) 29.08.2014

(72) Տիգրան Սաշայի Վարդանյան (AM)

(73) Տիգրան Սաշայի Վարդանյան, 3005, Շիրակի մարզ, ք. Արթիկ, Ս. Դավթի 19, բն. 3 (AM)

(54) **Ջերմափոխանակիչ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է կենցաղային սարքավորումներին և կարող է օգտագործվել ջրատաքացիչներում տաք ջուր ստանալու համար:

Ջերմափոխանակիչն ունի միմյանցից միևնույն հեռավորության վրա տեղակայված ուղղաձիգ ջերմաթիթեղների հավաքակազմ, ջերմաթիթեղների միջով անցկացված գալարախողովակ, ջրի մուտքի և ելքի խողովակներ:

Գալարախողովակի մեկ ծայրամասը միակցված է մուտքի խողովակին: Ջերմափոխանակիչն ունի նաև հավաքակազմի վրա հարակից ջերմաթիթեղների միջև հեռավորության կեսի չափով շեղումով տեղադրված ջերմաթիթեղների լրացուցիչ հավաքակազմ: Լրացուցիչ հավաքակազմի ջերմաթիթեղների բարձրությունը հավասար է հավաքակազմի ջերմաթիթեղների բարձրության կեսին: Գալարախողովակն անցկացված է նաև լրացուցիչ հավաքակազմի ջերմաթիթեղների միջով, իսկ գալարախողովակի մյուս ծայրամասը միակցված է ելքի խողովակին:

Բարձրացվում են ջերմափոխանակիչի և ջրատաքացիչի ՕԳԳ-ները, 1 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	<i>վկայագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ստացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
24	<i>գրանցման թվականը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
51	<i>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</i>
54	<i>արդյունաբերական նմուշի անվանումը</i>
55	<i>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</i>
72	<i>հեղինակը(ները), երկրի կոդը</i>
73	<i>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին


- (51) 01-03 (11) 347 (13) S
 (21) 20140014 (22) 15.05.2014
 (72) Աշոտ Միքայելի Բաղդասարյան (AM),
 Սաթենիկ Արմենի Դանիելյան (AM)
 (73) «Բանդիվան կաթ» ՍՊԸ, ՀՀ, Շիրակի
 մարզ, Ամասիայի շրջան, գյուղ Բանդիվան (AM)
 (54) Պանիր լցոնած (6 տարբերակ)
 (55)



3.1



1.1



3.2



1.2



4.1



2.1



4.2



5.1



5.2



6.1



6.2

(51) 09-01 (11) 348 (13) S
09-02

(21) 20140024 (22) 15.08.2014

(31) 29/485644 (32) 20.03.2014 (33) US

(72) Արաշ Իրանփոր (CA)

(73) Մոթոսել Ինդասթրիլը Գրուպ Ինք. (CA)

(74) Հ. Դավթյան

(54) Կրկնակի շիշ


(55)




1.1




1.2




1.3



1.4



1.6



1.5



1.7

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20131765
(220) 26.12.2013

(111) 22406
(151) 13.01.2015
(181) 26.12.2023

(730) «Մարշալ իտալիան տեխնոլոջի» ՍՊԸ,
Երևան, Եղիազարյան 10, AM

(442) 07.04.2014
(540)



(526) «ITALIAN TECHNOLOGY» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ և բաց կապույտ, օխրա, կարմիր և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20131781
(220) 27.12.2013

(111) 22407
(151) 13.01.2015
(181) 27.12.2023

(730) «Գրիակ» ՍՊԸ, գ. Առինջ, Մաշտոցի 1-ին նրբ., տուն 21, AM

(442) 04.02.2014

(540)



(526) «ԱՌՂՋ ՍՆՈՒՆՉ» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կանաչ և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդոլ, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և ճարպեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո և սուրճի փոխարինիչներ. բրինձ, տապիոկա, սագո, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. շաքար, մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց.

դաս 31. հացահատիկ, գյուղատնտեսական, այգեգործական, անտառային և հացահատիկային մթերքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. կենդանիներ. թարմ մրգեր և բանջարեղեն. սերմեր, բնական բույսեր և ծաղիկներ. կեր կենդանիների համար. ածիկ.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում.

դաս 44. բժշկական ծառայություններ. անասնաբուժական ծառայություններ. կենդանիների և մարդկանց հիգիենիկ և կոսմետիկական ծառայություններ. գյուղատնտեսական, այգեգործական և անտառային ծառայություններ:

(210) 20131790 (111) 22408
 (220) 28.12.2013 (151) 13.01.2015
 (181) 28.12.2023

(730) «Վի վի փի քոնսալթինգ» ՍՊԸ, Երևան, Ալ. Մանուկյան 17, բն. 11, AM
 (442) 07.04.2014
 (540)



(526) «INVEST» և «ARMENIA» գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
 (591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր, կապույտ և ծիրանագույն գունային համակցությամբ:
 (511)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ, մասնավորապես՝ ցուցահանդեսների կազմակերպում վաճառքի նպատակով. բիզնեսի ոլորտում խորհրդատվություն.

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում. ցուցահանդեսների, սեմինարների, ֆորումների կազմակերպում:

(210) 20140029 (111) 22409
 (220) 14.01.2014 (151) 13.01.2015
 (181) 14.01.2024

(730) Հենզոու Հիբլիթն Դիջիթլ Թեքնոլոջի Քո., Լթդ., CN

(442) 07.03.2014
 (310) 13279835, 13279836, 13279837, 13279839
 (320) 24.09.2013 (330) CN
 (540)



(511)
 դաս 9. տվյալների մշակման սարքավորումներ, համակարգչային հիշողության սարքեր, ձայնագրված (կրիչների վրա անցկացված) համակարգչային օպերացիոն ծրագրեր, երկրորդական (առանձին) համակարգչային սարքեր, ձայնագրված (կրիչների վրա անցկացված) ծրագրային ապահովում, միկրոպրոցեսորներ, մոնիտորներ (համակարգչային սարքեր), կենտրոնական մշակման կայաններ (պրոցեսորներ), ինտեգրալային սխեմաներով քարտեր, սմարթ քարտեր (ինտեգրալային սխեմաներով քարտեր), էլեկտրոնային հրապարակումներ (ներբեռնվող), համակարգչային ծրագրեր (ներբեռնվող ծրագրային ապահովում), ընթերցող սարքեր (տվյալների մշակման սարքավորում), տվյալների պահպանման սարքեր (կրիչներ) (USB), հսկողության ծրագրեր (համակարգչային ծրագրեր), համակարգչային խաղերի ծրագրային ապահովում, ներբեռնվող երաժշտական ֆայլեր, ներբեռնվող տեսագրական ֆայլեր, հաշվիչներ, քանակության ցուցիչներ, էլեկտրոնային նշաններ ապրանքների համար, էլեկտրոնային իրազեկման վահանակներ, էլեկտրոնային ցուցատախտակներ, լուսարձակող էլեկտրոնային ինդիկատորներ, թարթալապտերներ, ազդանշանային լուսարձակներ, լուսարձակող կամ մեխանիկական ազդանշանային վահանակներ, լուսարձակող կամ մեխանիկական ազդանշաններ, միջհաղորդակցման սարքեր, տեսահեռախոսներ, ցանցային հաղորդակցման սարքավորում, ռադիոտեխնիկական սարքավորում, ռադիոտեղորոշիչ սարքավորումներ, էլեկտրադինամիկ սարքավորում նախատեսված ազդանշանների հեռակառավարման համար, տեղորոշման սարքեր տրանսպորտային

միջոցների համար (համակարգիչներ՝ տեղադրված տրանսպորտային միջոցներում), գլոբալ դիրքավորման համակարգերի (GPS) սարքավորումներ, օպտիկական հաղորդակցման գործիքներ, ձայնագրման սարքեր, տեսաձայնագրիչներ, տեսախցիկներ, շարժական տեսաձայնային նվագարկիչներ, ինքնակառավարվող գովազդային մեքենաներ, ձայնա- և տեսաընդունիչներ, կինեմատոգրաֆիական ֆիլմերի խմբագրման համար նախատեսված հավելվածներ, տեսախցիկներ (լուսանկարչական), արագաչափ սարքեր (լուսանկարչական), լուսակայծիչներ (լուսանկարչական), դիտորդական գործիքներ, տեսալսողական ուսուցման սարքավորում, դետեկտորներ, տրանսպորտային միջոցների արագությունը չափող սարքավորումներ, ոչ բժշկական նպատակների համար նախատեսված լազերներ, տրանսպորտային միջոցների վարման և վերահսկման նմանակիչներ, խոնավության չափիչներ, ջերմաստիճանի ցուցիչներ, օպտիկական սարքեր և գործիքներ, օպտիկական ոսպնյակներ, հաղորդիչ նյութեր (լարեր, մալուխներ), կիսահաղորդիչ սարքավորում, տեսաէկրաններ, հեռակառավարման սարքեր, կերպափոխիչներ, լույսի կարգավորիչներ (էլեկտրական), պատահարներից պաշտպանող սարքեր անձնական օգտագործման համար, հակառևանգման սարքավորում (էլեկտրական), հրդեհային ազդասարքեր, ծխի դետեկտորներ, ձայնային ազդանշման սարքեր, զգուշացնող զանգեր, էլեկտրական փականներ, տազնապի զանգեր, հակառևանգման զգուշացնող սարքավորում, ակնոցներ, գավառական տարրեր, մարտկոցների տարրեր, անիմացիոն մուլտեր.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. առևտուր.

դաս 38. հեռուստատեսային հեռարձակում, հեռախոսային ծառայություններ, համակարգչային տերմինալներով հաղորդակցում, հաղորդագրությունների և պատկերների ավտոմատ համակարգչային փոխանցում, հեռահաղորդակցություն տեղեկատվություն, հաղորդագրություն ուղարկող

սարքավորումների վարձույթ, հեռահաղորդակցության սարքավորումների վարձույթ, գլոբալ համակարգչային ցանցի հետ հեռահաղորդակցային կապի տրամադրում, օգտատերերին գլոբալ համակարգչային ցանց մուտքի տրամադրում, տեսակոնֆերանսի ծառայություններ, տեղեկության փոխանցում, էլեկտրոնային փոստ, տեղեկատվության փոխանցման սարքավորումների վարձույթ, օպտիկամանրաթելային կապ, էլեկտրոնային տեղեկագրի ծառայություններ (հեռակապի ծառայություններ), համաշխարհային համակարգչային ցանց մուտքի ժամանակավոր վարձույթ, ինտերնետ զրուցասենյակներով ապահովում, տվյալների բազա մուտքի ապահովման ծառայություններ, ձայնային փոստի ծառայություն, թվային ֆայլերի փոխանցում.

դաս 42. տեխնիկական հետազոտություններ, տեխնիկական ծրագրի ուսումնասիրություններ, ինժինիրինգ (նախագծում), հետազոտություններ և մշակումներ (երրորդ անձանց համար), տեխնիկական գծագրում, գեոդեզիական գծահանում, եղանակի կանխատեսում, օդերևութաբանական տեղեկատվություն, արդյունաբերական դիզայն, ներքին հարդարման դիզայն, համակարգիչների վարձույթ, համակարգչային ծրագրավորում, համակարգչային ծրագրային ապահովման նախագծում, համակարգչային համակարգերի վերլուծություն, համակարգչային համակարգերի նախագծում, համակարգչային ծրագրային ապահովման թարմացում, համակարգչային սարքավորումների նախագծման և մշակման ոլորտում խորհրդատվական ծառայություն, համակարգչային ծրագրային ապահովման վարձույթ, համակարգչային տվյալների վերականգնում, համակարգչային ծրագրային ապահովման սպասարկում, համակարգչային ծրագրի վերարտադրություն, տվյալների կամ փաստաթղթերի փոխարկում ֆիզիկական կրիչներից էլեկտրոնայինի, երրորդ անձանց համար կայքերի ստեղծում և պահպանում, համակարգչային կայանների (կայքերի) հոսթինգ, համակարգչային ծրագրային ապահովման տեղադրում, համակարգչային ծրագրերի և տվյալների փոխարկում (ոչ ֆիզիկական փոխակերպում), համակարգչային ծրագրային ապահովման հետ կապված

խորհրդատվություն, վեբ- սերվերի վարձույթ, համակարգչի վիրուսներից պաշտպանության ծառայություններ, ինտերնետ որոնման համակարգի ապահովում, համակարգչային համակարգի հեռամոնիտորինգ, փաստաթղթերի թվայնացում.

դաս 45. անվտանգության խորհրդատվություն, հակաառևանգման և պաշտպանության ազդասարքերի մոնիտորինգ, գիշերային պահակության ծառայություններ, պահակության ծառայություններ, գործարանի անվտանգության ստուգման ծառայություններ, երեխայի ժամանակավոր խնամք, տան ժամանակավոր հսկողություն, ընտանի կենդանիների ժամանակավոր խնամք, սոցիալական ուղեկցման ծառայություններ, հրշեջ ծառայություններ, հրդեհային ազդասարքերի վարձույթ, մտավոր սեփականության խորհրդատվություն, համակարգչային ծրագրային ապահովման լիցենզիաներ (իրավաբանական ծառայություններ), դոմենի անվանգրանցում (իրավաբանական ծառայություններ):

(740) Զարուհի Մանուկյան

(210) 20140371 (111) 22410
(220) 14.03.2014 (151) 13.01.2015
(181) 14.03.2024

(730) Էփլ Ինք., US
(442) 04.07.2014
(540)

APPLE

(511)

դաս 12. ցամաքով, օդով կամ ջրով տեղաշարժվող տրանսպորտային միջոցներ, էլեկտրոնային սարքերի բաղադրիչներ և մասեր նախատեսված ավտոմեքենաների, երկաթուղային վագոնների և շարժիչների, նավերի և ինքնաթիռների համար, հակաառևանգման սարքավորումներ, հակաառևանգման ազդանշաններ տրանսպորտային միջոցների համար, հեծանիվներ, գոլֆի սայլակներ,

անվասայլակներ, օդային պոմպեր, մոտոցիկլետներ, մասեր և պարագաներ վերոնշյալ ապրանքների համար.

դաս 14. ոսկերչական իրեր, ժամացույցներ, ձեռքի ժամացույցներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված ապրանքներ, ճարմանդներ, բանալիների կախազարդեր, վայրկյանաչափներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված գնդասեղներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված զարդարանքներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված փողկապների գնդասեղներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված փողկապների սեղմակներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված կրծքանշաններ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված ապարանջաններ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված մանյակներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված մեղալներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված բանալիների կարճ շղթաներ և զարդարանքներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված պատված կոճակներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված սեղմակներ, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված տուփեր, թանկարժեք մետաղներից կամ դրանցով պատված զարդանախշեր, կոստյումների զարդեր, թանկարժեք մետաղներից քանդակներ և ապրանքներ.

դաս 16. հասցեով կնիքներ, նամականիշներ, թուղթ, սովարաթուղթ և դրանից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, տպագրական արտադրանք, նյութեր կազմարարական աշխատանքների համար, լուսանկարներ, գրենական պիտույքներ, կաչուն պիտակներ ու կաչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար, նկարիչների համար նախատեսված նյութեր, նկարչական վրձիններ, գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի), ուսուցողական նյութեր և դիտողական օժանդակ նյութեր (բացառությամբ սարքավորումների), պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, տառաշարեր, տպագրական

կլիշեներ, համակարգիչներին վերաբերող տպագրական նյութեր, պլանշետային համակարգիչներին վերաբերող տպագրական նյութեր, մուլտիմեդիա արտադրանքին, ինտերակտիվ ապրանքներին և առցանց ծառայություններին վերաբերող տպագրական նյութեր, տպագիր հրատարակություններ, պարբերականներ, գրքեր, ամսագրեր, թերթեր, բրոշյուրներ, գրքուկներ, պամֆլետներ, ձեռնարկներ, հանդեսներ, թուղթեր, բացիկներ, գովազդային և քարոզչական նյութեր, կատալոգներ, համակարգչային ծրագրային ապահովման հետ կապված կատալոգներ, համակարգչային բրոշյուրներ, համակարգչային ձեռնարկներ, համակարգիչների բաղկացուցիչ մասերի հետ կապված տեղեկատվական ձեռնարկներ, համակարգիչների բաղկացուցիչ մասերի ուղեցույցներ օգտատերերի համար, համակարգչային ուսումնական ձեռնարկներ, համակարգչային ձեռնարկներ, տեխնոլոգիաների, թվային տեխնոլոգիաների և սարքավորումների (գաջեթների) վերաբերյալ հրապարակումներ, երաժշտական գործիքների և սարքավորումների վերաբերյալ կատալոգներ, կատալոգներ՝ հեռահաղորդակցության սարքերի, բջջային հեռախոսների, հեռախոսազանգեր ուղարկելու և ստանալու համար նախատեսված ձեռքի և շարժական թվային էլեկտրոնային սարքերի, ֆաքսերի, էլեկտրոնային փոստի, տեսաձայնագրությունների, ակնթարթային հաղորդագրությունների, երաժշտության, տեսալսողական և այլ մուլտիմեդիա աշխատանքների և այլ թվային տվյալների վերաբերյալ, երաժշտական գրքեր, երաժշտական ուսումնական ձեռնարկներ, երաժշտական ամսագրեր, գրասեղանի պարագաներ, հեռախոսահամարների և հասցեների գրքեր, օրակարգի գրանցման համար նախատեսված նոթատետրեր (աջենդա), օրագրեր, օրացույցներ, ցուցանակներ, շրջանակով և առանց շրջանակի լուսանկարներ, տպագիր նախշեր T-աձև շապիկների և գոտիով լայն բլուզների համար, ցուցադրման նյութեր, փոխադրանկարներ և կաշուն պիտակներ, աուդիո ձայնագրությունների հետ վաճառվող բուկլետներ, մասեր և պարագաներ վերոնշյալ ապրանքների համար.

դաս 25. հագուստ, կոշիկներ, գլխարկներ.

դաս 28. խաղալիքներ, խաղեր և խաղալու իրեր, էլեկտրոնային խաղալիքներ, խաղեր և խաղալու իրեր, երաժշտական խաղալիքներ, խաղեր և խաղալու իրեր, ձեռքի էլեկտրոնային խաղային բլոկներ, ձեռքի էլեկտրոնային խաղեր և սարքավորումներ, բացառությամբ՝ արտաքին էկրանով կամ մոնիտորով օգտագործման համար հարմարեցվածների, ցուցադրման ֆունկցիա ունեցող առանձին խաղային ապարատներ, էլեկտրոնային համակարգչային խաղեր, բացառությամբ՝ արտաքին էկրանով կամ մոնիտորով օգտագործման համար հարմարեցվածների, էլեկտրոնային խաղերի համար ապարատներ, բացառությամբ՝ արտաքին էկրանով կամ մոնիտորով օգտագործման համար հարմարեցվածների, տեսախաղեր, բացառությամբ՝ արտաքին էկրանով կամ մոնիտորով օգտագործման համար հարմարեցվածների, գվարճանքի համար նախատեսված խաղային մեքենաներ, ցուցադրման ֆունկցիա ունեցող ժամանցային սարքավորումներ, խաղալիք համակարգիչներ (չաշխատող), խաղալիք բջջային հեռախոսներ (չաշխատող), էլեկտրոնային սարքավորումներ (ձեռքի խաղալիք), խաղալիք աուդիոսարքավորումներ, խաղալիք երաժշտական արկղեր, խաղալիք երաժշտական գործիքներ, մեղեդիների և ձայներիզների նվագարկման խաղալիք նվագարկիչներ, մարտկոցով աշխատող խաղալիքներ, արտաքին էկրանով կամ մոնիտորով օգտագործման համար տեսաեկր ունեցող խաղային ապարատներ, տեսաեկր ունեցող առանձին խաղային ապարատներ, ինտերակտիվ համակարգչային խաղալիքներ ու խաղեր, խաղաքարտեր, մասեր և պարագաներ վերոնշյալ ապրանքների համար.

դաս 35. քարտուղարական ծառայություններ, մասնավորապես՝ նամակագրության տեսակավորման, վերամշակման, ընդունման և գրանցման ծառայություններ, գործերի կառավարում գործարարության ասպարեզում, վարչական գործունեություն գործարարության ասպարեզում, գործարարական խորհրդատվական ծառայություններ, գրասենյակային գործառույթների ապահովում, գովազդային գործակալության ծառայություններ, գովազդ,

մարկետինգ և գովազդային ծառայություններ, գովազդային և շուկայագիտական խորհրդատվություն, վաճառքի խթանման ծառայություններ, այլ անձանց ապրանքների և ծառայությունների առաջխաղացման նպաստում, շուկայի հետազոտություն, գովազդին արձագանքի վերլուծություն և շուկայի հետազոտություն, այլ անձանց համար գովազդային նյութերի նախագծում, ստեղծում, պատրաստում, արտադրություն և գովազդների տարածում, գովազդային միջոցների օգտագործման պլանավորման ծառայություններ (մեդիա պլանավորում), սպառողական հավատարմության ծրագրերի կառավարում, խրախուսական պարգևային ծրագրերի կազմակերպում և անցկացում ապրանքների և ծառայությունների վաճառքին նպաստելու համար, համակարգչային տվյալների հիմնապաշարի և ֆայլերի կառավարում, տվյալների մշակման ծառայություններ, գլոբալ համակարգչային ցանցերում և այլ էլեկտրոնային և հաղորդակցման ցանցերում առկա տեղեկությունների, կայքերի և այլ ռեսուրսների ցուցանիշների ստեղծում այլ անձանց համար, այլ անձանց համար գլոբալ համակարգչային ցանցերում և այլ էլեկտրոնային և հաղորդակցման ցանցերում առկա տեղեկությունների, կայքերի և այլ ռեսուրսների ապահովում, որոնում, զննում և վերականգնում, օգտատիրոջ նախընտրությունների համաձայն գլոբալ համակարգչային ցանցերում և այլ էլեկտրոնային և հաղորդակցման ցանցերում տրամադրված տեղեկատվության բովանդակության կազմակերպում, գլոբալ գործարարական, սպառողական և առևտրային տեղեկատվության ապահովում համակարգչային ցանցերի և այլ էլեկտրոնային և հաղորդակցման ցանցերի միջոցով, գործարարական ծառայություններ, մասնավորապես՝ այլ անձանց ապրանքների և ծառայությունների լայն տեսականու առք ու վաճառքի վերաբերյալ համակարգչային տվյալների հիմնապաշարի ապահովում, համացանցում և այլ էլեկտրոնային, համակարգչային և հաղորդակցման ցանցերում հրատարակչության համար համակարգչային տվյալների հիմնապաշարի տեղեկատվության հավաքագրում և տեղեկագրքերի կազ-

մում, մանրածախ և առցանց խանութի մանրածախ վաճառքի ծառայություններ, համացանցի և այլ էլեկտրոնային, համակարգչային և հաղորդակցման ցանցերի միջոցով տրամադրվող խանութի մանրածախ վաճառքի ծառայություններ, մի շարք ընդհանուր հետաքրքրության թեմաներով գրքերի, ամսագրերի, պարբերականների, տեղեկագրերի, հանդեսների և այլ հրապարակումների ոլորտում համացանցի և այլ էլեկտրոնային, համակարգչային և հաղորդակցման ցանցերի միջոցով տրամադրվող խանութի մանրածախ վաճառքի ծառայություններ, ժամանցի ոլորտում, մասնավորապես՝ ֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի, մարզական միջոցառումների, երաժշտական ստեղծագործությունների, և ծայնային և տեսաձայնային ստեղծագործությունների ոլորտներում համացանցի և այլ էլեկտրոնային, համակարգչային և հաղորդակցման ցանցերի միջոցով տրամադրվող խանութի մանրածախ վաճառքի ծառայություններ, համակարգչային, էլեկտրոնային և ժամանցային արտադրանքի, հեռահաղորդակցության սարքավորումների, բջջային հեռախոսների, ձեռքով կառավարվող շարժական թվային էլեկտրոնային սարքերի և այլ սպառողական էլեկտրոնիկայի, համակարգչային ծրագրերի և աքսեսուարների, արտաքին սարքերի և նման ապրանքների փոխադրման համար արկղերի, տուփերի, պատյանների մանրածախ վաճառքի ծառայություններ, էլեկտրոնային, համակարգչային և հաղորդակցման ցանցերի միջոցով, խանութներում և գլոբալ հաղորդակցման ցանցերի և այլ էլեկտրոնային և հաղորդակցման ցանցերի միջոցով տրամադրվող ապրանքների ցուցադրում, բաժանորդագրման ծառայություններ, մասնավորապես՝ համացանցի և այլ էլեկտրոնային, համակարգչային և հաղորդակցման ցանցերի միջոցով ապահովվող տեքստի, տվյալների, պատկերի, տեսա- և ձայնաբովանդակության և մուլտիմեդիա բովանդակության բաժանորդագրում, համացանցի և այլ էլեկտրոնային, համակարգչային և հաղորդակցման ցանցերի միջոցով վճարով կամ կանխավճարով բաժանորդագրման

դիմաց ներբեռնվող նախապես ծայնագրված տեքստի, տվյալների, պատկերի, տեսա- և ծայնաբովանդակության և մուլտիմեդիա բովանդակության ապահովում, առևտրային, առևտրի և գործարար համաժողովների, շուկայի ծրագրերի և ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում, վերը նշվածներին վերաբերող տեղեկատվական, խորհրդատվական և խորհրդակցական ծառայություններ:

դաս 36. բանկային ծառայություններ, արժեթղթերի շուկայում միջնորդային ծառայություններ, բարեգործական դրամահավաք, ֆինանսական գործարքներ, դրամական գործարքներ, անշարժ գույքի գործարքներ, ֆինանսական վերլուծություն, տեղեկատվություն, խորհրդատվություն և կառավարում, ֆինանսական ծառայություններ, ֆինանսական գործարքների ծառայություններ, ֆինանսական փոխանցումների ծառայություններ, հաշիվների վճարման ծառայություններ, անվտանգ առևտրային փոխանցումների ապահովման ծառայություն, դեբետային և վարկային քարտերի սպասարկման ծառայություններ, վարկային քարտերով գործարքների իրականացման ապահովման ծառայություններ, էլեկտրոնային կանխիկ փոխանցումներ, էլեկտրոնային վճարման ծառայություններ, ֆինանսական գործարքների կատարման ծառայություններ, վճարման գործարքների քարտային ծառայություններ, վարկային քարտային գործարքներին վերաբերող տեղեկատվության ապահովում, ապահովագրական ծառայություններ, ապահովագրման վերաբերյալ երաշխավորում, միջնորդային ծառայություններ, տեղեկատվություն և խորհրդատվություն. ներդրումների վերաբերյալ վերլուծություն, խորհրդատվության տրամադրում և կառավարում:

դաս 37. շենքերի կառուցում, վերանորոգում, տեղադրման ծառայություններ, համակարգիչների, համակարգիչների կից սարքերի և էլեկտրոնային սարքերի շահագործում, վերանորոգում և սպասարկում, համակարգիչների, համակարգչային ծրագրերի, համակարգչային արտաքին սարքերի և էլեկտրոնային սարքերի օգտագործման, շահագործման, վերանորոգման, սպասարկման

և արդիականացման վերաբերյալ տեխնիկական աջակցության և խնդիրների վերացման ծառայությունների տրամադրում, համակարգիչների, համակարգչային արտաքին սարքերի և էլեկտրոնային սարքերի տեղադրման, օգտագործման, շահագործման, վերանորոգման, սպասարկման և արդիականացման վերաբերյալ տեղեկատվության ապահովում, վերը նշվածներին վերաբերող տեղեկատվական, խորհրդատվական և խորհրդակցական ծառայություններ:

